

Հովիկ Վարդումյան

Ու խ Տ Յ Ա Լ Ն Ե Ր Ը

Վեղ



ԵՐԵՎԱՆ 2015

ՀՏԳ 821.19-31 Վարդումյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Վ 307

Հրատարակված է պետական աջակցությամբ

Հովիկ Վարդումյան

Վ 307 Ուխտյալները/վեպ:- Հ. Վարդումյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2015.-
216 էջ:

*Վեպի հիմքում ընկած են Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանության
իրադարձությունները:*

ՀՏԳ 821.19-31 Վարդումյան
ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-75-008-8

© Վարդումյան Հովիկ, 2015
© Էդիթ Պրինտ, 2015

*Ես վստահ եմ, որ օր մը թուրքը պիտի կործանւի իր
անասելի ոճիրներու բեռան տակ...*

Գարեգին քահանա Ոսկերչյան
1915թ. նահատակ

*Ինչ կլինենք մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի
Ուրֆաներ մեր դեմ այսպես ծառանային...*

Ֆախրի փաշա

«Կաղը առաւօտ կը մեկնինք Այաշ, սակայն գիտեմ, որ տեղ պիտի չհասնինք: Վաղը այս ժամուն արդէն ամէն ինչ վերջացած պիտի ըլլայ: Իմ կեանքիս վրայ չէ որ կ'ափսոսամ, մահուան մասին չէ որ կը մտածեմ. 19 տարի առաջ պիտի կտրուէր թելը, ինչ որ ապրած եմ, շահ մըն է արդէն:

«Ինչ որ ցաւ կը պատճառէ ինձի եւ մեր ձերբակալութենէն ի վեր կը ձնշէ հոգիիս վրայ, այդ ալ ամբողջ ժողովուրդով խաբուած ըլլալուս իրողութիւնն է: Ճակատագրի չեմ հաւատար. մարդիկ իրենք է որ կը կերտեն իրենց ծակատագիրը, ազգերը՝ առանելապէս:

«Կեանքը պայքար մըն է, իւրաքանչիւր մարդ եւ ժողովուրդ պէտք է երեւան բերէ իր ուժերն ու կարողութիւնները՝ այդ պայքարին մէջ յաղթական դուրս գալու համար: Իսկ ասիկա կարելի է, եթէ պայքարողը կրցած է ճանչնալ զինք շրջապատող պայմանները ու ըստ այնմ ընտրած է գոյութեան կռուի իր զէնքերը: Երբ պայքար կայ, կը նշանակէ որ կայ հակառակորդ. ուստի յաջողելու համար պէտք է հասկնալ անոր նկարագիրը, տկար եւ թոյլ կողմերը ու ըստ այնմ տալ հարուածը:

«Մեր այսօրուան վիճակին պատասխանատուները մենք ենք, մեծով ու պզտիկով: Որովհետեւ այս փորձանքը, որուն կ'ենթարկուինք՝ ո՛չ այսօրուան պատմութիւնն է եւ ո՛չ ալ երէկուան. դարեր շարունակ Նոյն ձեւով կրկնուած է այս վիճակը ու մենք խրատուիլ չենք գիտցած: Նոյն թուրքն է, միշտ Նոյն ձեւով, Նոյն միջոցներով յաջողած է խարել մեզ ու նստեցնել մոխիրի վրայ:

«Մենք ապրիլ ուզած ենք, հրաժարելով սակայն գոյութեան պայքարի օրէնքներէն: Իրասփած ենք մահէն՝ հաւաքաբար անոր ծիրաններուն մէջ իյնալու համար: Հարիւր հազարներ զոհ տուած ենք շարունակ՝ առանց իմաստաւորելու եւ արժեցնելու զանոնք: Յաճախ «մարտիրոս եւ ևահատակ ժողովուրդ» յորջորջուիլը նկատած ենք պարծանք մը, փոխանակ զայն ընդունելու նախատինքի տեղ:

«Այսօր ազգովին բնաջնջուելու վտանգին մէջ կը գտնուինք: Ու այն մտածումը, թէ կրկին կ'իյնանք թուրքերու թակարդին մէջ, կատաղութեամբ կը լեցնէ հոգիս. ո՞ր է մեր աշխատանքի արդիւնքը, հո՞ս էր մեր տեղը թէ՛ ոչ ժողովուրդին մէջ, սակայն ոչ արքայի ճամբաներուն վրայ, այլ՝ Բուրքիան մէկ ծայրէն միւր ասպատակելու կոչուած հրոսախումբերու գլուխը: Ա՛յդ ալ մահ պիտի բերէր. այո՛ թերեւ, սակայն պատուաւոր մահ մը, սերունդներուն օրինակ դառնալիք վախճան մը:

«Դժբախտ է այն ժողովուրդը, որ գոյութեան պայքարի ճակատին վրայ խոհեմութիւնն ու համակերպութիւնը կ'ընտրէ իրեն առաջնորդ: Առանելապէս դժբախտ է, երբ առիթները օգտագործել չի կրնար ու դէպքերը նախատեսելու կարողութենէն զրկուած է իսպառ:

«Ես մնունելու է որ կ'երթամ, իսկ դուն թերեւ ապրելու բախտը ունենաս. այդ պարագային վիզիդ պարտքը թող ըլլայ փոխանցել այս խօսքերս վերապրողներուն: Ըսէ՛ թողորին, որ ազգովին յանցաւոր ենք այս համակերպութեան համար. ըսէ՛ վերջապէս մեր ազգակիցներուն, որ մարդիկ կը պատժուին ո՛չ միայն իրենց մեղքերուն համար, այլեւ կը պատժուին իրենց մեղքերովը»:

Վահան Բէիէեան

*1895 թվականի Ուրֆայի դեպքերի հերոսներից,
հնդափոխական գործիչ,
11 օգոստոս, 1915թ.*